

Կ-1002⁵-06.05.2016-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով» բառերը փոխարինել ««Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում և 3-րդ մասում, 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 5-րդ կետում «դրոշմանիշների, հսկիչ նշանների (դրոշմապիտակների)» բառերը փոխարինել «դրոշմանիշերի, դրոշմապիտակների» բառերով:

Հոդված 3. Օրենքի հավելված 4-ի 2-րդ կետի 3-րդ ենթակետում և 8-րդ կետում՝

1) ««ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով» բառերը փոխարինել ««բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով» բառերով:

2) «արժեքի» բառից հետո լրացնել «և ներմուծման հարկային հայտարարագրերում նշվող ավելացված արժեքի հարկի հարկման բազայի արժեքի հանրագումարով» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթացմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացնել «, հայտարարագրեր» բառով:	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացվել է «, հայտարարագրեր» բառով:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինել «ազգային անվտանգության» բառերով:	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինվել են «ազգային անվտանգության» բառերով: